

ՀԱՄԱՍՏՈՅ ՏԵՊՈՒԹԻՒՆ ԽՄԻՄՈՒ ԵԿ ԳԵՐԱՎԵՐԴԻՈՑ ՔԱՆԻ
ՄԻ ՀՈԴԵԼՈՐ ԽԱԿԱԿՈՆ ԴՐՈՒՑԱՑ ՃԵՐԿԱՑ ԴՐՈՒԹԵԱՆԵ

(Հայունակութեան և գլուխութեան մասին)։

၁၃၂၁၊ ၁၃၂၂၊ ၁၃၂၃၊ ၁၃၂၄၊ ၁၃၂၅၊ ၁၃၂၆၊ ၁၃၂၇၊ ၁၃၂၈၊ ၁၃၂၉၊ ၁၃၂၁၀

Քիշնեի Պալրոցը համեմատելով վիճակիս ու-
րիշ ազգային հոգեւոր Պալրոցաց հետու հարկաւոր
էր, որ յառաջադիմութեան օրինակ լինէր սոցա-
մինչդեռ կարելի է ասել, որ այժմ վերջին տեղը
կրոնէ ամենայն մասանց մէջ։ Այս տեղ կարելի
էր ունենալ կեղրոնսական Ռւսումնարան մի, յո-
րում Պետական ու քաղաքացիութեան պարոցնե-
րուն մէջ ուսումները աւարտած աշակերտները
ըսցնեին իրենց հարկաւոր ձանցուած առարկա-
յից զինաւորները պէտք էր այս ունենար գիշե-
րօմիկ ուսումնարան մի, որոյ մէջ ուսում առ-
նեին մերձակայ հայաբնակ քաղաքաց բնակիշնե-
րուն զաւակները, և մինչև ցայժմ պէտք էր նոր
սերունդը բաւական հայերէնախօս լինէր։ Պե-
ցէն, Օրչէլէն, Խօմին ամրոցէն, Հնչչտ զիւղա-
քաղաքէն, և ուրիշ Հայաբնակ զիւղերէն միմէկ
քիչ թոշակաւոր աշակերտներ կարող էր ունե-
նալ այնպիսի ուսումնարան մի։ Այս կողմի Հա-
յերէն շատերը հարուստ կալուածատէրներ են,
գոյց համար դժուար չեր իրադորձել այս առա-
ջարկութիւնը, նոյն իսկ Քիշնեի Հայոց համար
այս բանը մինչև ցայժմ անկարելի չէ, եթէ դոքա-
փոքր ինչ հասարակայ օգուտը անձնականէն դա-
նազանելու յատկութիւնն ունենային։ Բայց այս
խնդրոյն մէջ երկու արժանաւոր բան կայ դիտե-
լու, որոնք պատճառ եղած են նոյն իսկ Քիշնեի
դարրոցին ամօթալի յետամասցութեանը։

Վլսաւորապէս զիտկու ըսն է Քիշնե եկած
Առաջնորդաց դործունէւթեան կերպը ճշմարժուն
առելով Քիշնե եղած և աջնորդները մինչև ցայդմ
անհոգ եղած են Քիշնեի ժողովրդեան ուսումնա-
կան պիտոյիցը հետ ծանօթանալուց աւելորդ սե-
պած են նոցա կեանքին մէջ մտնելով՝ որոտինին
զրաւելու և յուսումնասիրութիւն յորդորելու՝
բաւականանալով նոցա հոգեոր պիտոյից հոգա-
ցողութեակիրը Քիշնե եկալ Առաջնորդները վի-
ճակին կալուածոցը պարխապներուն մէջ փակուած

Կալծես թէ երգում՝ կընեն այդ պարխապներէն չեղն' լու, ժողովրդեան հետ անտարրեր կերպով վարուելու, մինչեւ հարկաւոր է իրենց այդ բերդին մէջէն ժամանակ ժամանակ եղնել ու յարձակուել ժողովրդեան տղիսութեանը վերայ, քաշել պատռել նոցա մօսաց խաւարապատ վարագոյրը ցուցանել նոցա ազգու խօսքերով ներկայ գարուս լուսաւոր պահանջմունքները, բեեաել նոցա ուշն և միաբը նոյն քաղաքի բնակչաց ուշտումնախրութեան պատկերներուն վերայ, այս բնքն է բաղմակմիւ զարոցներուն, մեկնել նոցա թզուի ու կրօնի նշանակութիւնը ու սրբութիւնը ուրիշ ազգաց մէջ, վոտել նոցա սիրութ բարի նախանձու որ հետեւն այն ազգաց զեղեցիկ օրիւնակն. վիրջապէս վարուել նոցա հետ քաղցրութեամբ և սիրով, ինչպէս հարազատ հայր մի նոր հարազատ զաւակաց հետ, նոցա արտայայտած փափաքին շուտով յանձն առնուլ անձամբ կատարումը նոցա մէկ քանի պահանջներուն ընել զիջողութիւն, եթէ այն պահանջնանց կատարումը արդարեւ ուսման կարող է օգտակար լինիւ, և չէ յառաջ եկած ի շահամիրութենէ. Եթէ այս ճանապարհը լունեն վիճակիս Առաջնորդները ու զադրին այն պաղարիւն ու անտարրեր վարմունքէն, զոր կերպով մի մեղադրելու իրաւունք պէտք է տալ Քիշնեցոց, շուտով կիմացուի թէ որչափ տարրեր է հօր մի քաղցրահամրոյր վարմունքը իւր որդուոց կեամբին ու կարուտութեանցը վերայ պաղ պաղ նայելն. Երկրորդ՝ Քիշնեի Առաջնորդը կհամարուի արեգակ, որոյ լուսոյ ներքեալէտը է տարնան. Քիշնեի բնակչաց պատերը, նցնապէս նաև մերձակայութիւն քաղաքաց Հայերուն, որք երակներ լինելով՝ սրտի զարկը կնարանեն Բայց որովհետեւ Քիշնեի Հայերը երկար ատեն խաւարի տակ մնացած են, ուստի զարմանք չէ որ որիծերն այլ գործք խաւարի լինին, և մէջինին զգալի ջանացողութիւն մի երեխ անկախ ի հոգեւոր իշխանութենէ գործ տեսնելու. և որովհետեւ առանց զինոց անդամները մեռեալ են, կամ լաւ ես ասենք, ցաւադար զլուխ ունեցող անդամները կիսակատար ու թերի կիսատարին Տորեանց պաշտօնները, այսպէս է նաև Քիշնեի ժողովուրդը. Թէ կուզէ բան մի ընել, բայց ան-

բոշ է նորա զիտաւորութիւնը, պակասաւոր են ձեռնարկները, Կհասկացուի որ դպրոց է ու զած-նին, բայց այդ դպրոցի նախագիծը երբեմն շատ ընդարձակ լինելով՝ կտարակուսին ձեռք գալնել, երբեմն ալ շատ պայմանաւոր ուսումնափակուած կամչնան ու իրենց պատուցն հակառակ Կհամարին աննշան դպրոց մի ունենալ: Աերջապէս Հոգեոր Խշանութիւնը առանձին ու ժողովուրդը առանձին դործ տեսնելով և ոչ միարան սիրով ու խորհրդակցութեամբ, մինչեւ ցայժմ Քիշնեփ դպրոցը մնացած է այնպէս խեղճ գրութեան մ.ջ: Կարելի չէ ուրանալ և այն, որ ինչպէս ուրիշ քաղաքներ, նոյնպէս Քիշնեփ Հայոց քանի մի մասնաւորաց վերայ տեսնուած ազգասիրութիւնը կեղծ է ու շահափառութեամբ յառաջացած խաւրեական զգացմունք . . . : Այս բանը բացայաց դուրս ելաւ ի գալստեան Աեհ, Կամողիկոսին ի Քիշնեփ, որց վերայ ժամանակին խօսած եկը ուրիշ տեղ երկարորդն: Ասածներէս կարելի է եղարկացնել թէ մեր դպրոցները այն ժամանակ կենդանութիւն կարող են ընդունիլ, հաստատուն մնալ ու յարատեսել՝ երբ ժողովուրդը աշջակից լինի Հոգեոր Խշանութեան հետ Հոգեոր Խշանութիւնը նոյնպէս սիրով նայի իւր ժողովոց վերայ այս ինքն է փոխադարձ սիրով օգնեն միշտեանց դպրոցի բարեկարգութեանը համար: Եթէ Առաջնորդները վառ պահնն ժողովրդեան սրտին մ.ջ ուսման կայծը, շտան պատճառ անբաւականութեան շահասէր հոգաբարձուներ նշանակելով, հասկացնեն որ քաղաքի մը դպրոցը մասնաւորաց ումանց քմահամ գործողութեանց ասպարեզ չէ, հասպա բոլոր ժողովրդեան դաստիարակութեանը տաճարն ու ապաստանարանը եկեղեցին յետոյ Քիշնեփի դպրոցին այժմեան դրութեանը վերայ չարժէ խօսել: Տասն աշակերտաց երբեմն երկուոր կուզանն երբեմն վեցը, երբեմն ալ ձմեռ ատեն և ոչ մէկը, Խօկ վարժապետք կէս մի եկեղեցոյ արդիւնքն, կէս մ'ալ կալուածքներէն իրենց ոռչեկը անխափան կընդունին: Օրիորդաց դպրոց ալ կայ մէկ վարժուհիով, որ ի դարման աղքատութեան կընդունի 10 մասնեթ ամիսը: Ցաւալի՛ բարեփորձութիւնը

Ե Լ Զ 0 + Ե Ա Յ Ա Ր Ա Տ Վ Բ Ի Դ Պ Ո Ւ Յ Ե Ա Յ Ա Ր Ա Տ

Օտեսսայի զպրոցին վերայէն շատ փոթորիկներ անցան, Երբեմն տեղւոյն քահանային իշխանութեան տակ կմարտ, երբեմն ալ ժողովուրդը վարկինական ուսումնափառութեամբ վառուած իր ձեռքը կընդունէր այդ դպրոցը: Աերջապէս այժմ զարձեալ քահանային կառավարութեան տակն է և կարելի է ասել համարձակ, որ միայն քահանային յայտնի է այդ դպրոցին թէ արդիւնքը և թէ յառաջաղինութիւնը:

Գրիգորուպօլսոյ դպրոցը թէ և ուրիշ ամենայն քաղաքաց դպրոցներէն յառաջադէմ է, բայց Հոգեոր ծխական դպրոց չէ, հապա լուսաւորութեան նախարարին իրաւասութեան ներքեւ գրանուած դպրոցներէն մէկը կը համարուի: Տեղոյն օրիորդաց դպրոցը նոյնպէս յառաջադէմ է և պատճառը Գրիգորուպօլսոյ Տէր Գաւիթը Աւագ քահանային ուսումնափառութիւնն է և դպրոցի վարժապետի ու նորա ամուսնոյն արժունն հսկողութիւնը: Այդ դպրոցը կարող է օրինակ լինել Պեսարափիոյ ամենայն քաղաքաց դպրոցներուն, իրմւ մասնաւոր բարեկարգ դպրոց:

Ուստի Խոսքերնիս վերջացնելավ հետեւեալ կանոններուն անվթար կատարումը կհայցեմք տեսնել յապազայ բարեկարգութիւն այս վիճակի դպրոցաց:

• Ըստ զօրութեան 5 և 6 յօդուածոց թեմական դպրոցաց հզգաբարձուները ընտրուին անպատճառ երեք տարի ժամանական այնպիսի անձնելներէն, որոց անշահափառութիւնը վկայուած լինի ամենէն, ուստի և ընտրութիւն անշուշտ պէտք է կատարուի գաղանի քուէարկութեամբ:

Է Հոգաբարձուք պէտք է պարտաւորուին ամենայն տարւոյ վերջը և կամ տարեկան հարցաքըննութիւնն յետոյ մանրամասն հաշիւ տալ բոլոր ժողովրդեան դրամազիլոց շահէեցողութեան հանգանակեալ նուիրատուութեանց և այլ դրւարաց վերայ, և այս հաշուեցուցակը գոնեն Ժիսուն անձանց ստորագրութեամբը վաւերացնելն յետոյ առաջարկն ի քննութիւն է. Խշանութեան:

Դ. Հոգարարձուներէն մէկը անպատճառ լինի տեղւոյն Քահանայն, և ամենքը լինին չորս հոգի. պառաց իրաւութեան կարգադրութիւն չընեն. քահանայն լինի միանգամայն կրօնուացց չափաւոր ոռօճիկ ընդունելով:

Ե. Մէկ աղջատոհմէն երկու հոգարարձու բնաւ չընտրուի:

Է. Առանձին ցուցակագրութեամբ որոշուի աւանդիկ առարկայից տարեկան կուրու. և ըստ այնու պահանջուի ի վերջ տարւոյն վարժապետներէն յառաջադիմութիւն. նոյնպէս դպրոցի բոլոր ուսմանց կուրու (ընթացքը) յայսնի լինի:

Չ. Եկեղեցիէն փող ընդունող դպրոցները անպատճառ երգեցողութեան վարժապետու կանոնաւոր գասատուութիւն պէտք է մացնեն դպրոցին մէջ. և այս բանը կարող է քահանայն կատարել յաւելմամբ ոռօճիկ, եթէ դպրոցին դրամագլուխը չներեր առանձին վարժապետ վարձելու:

Դ. Դպրոցի հոգարարձուք իրաւունք չունենան եկեղեցւոյ և քահանայից գործերուն խառնուիլ. որյ պատճառաւուը գորեթէ ամենայն քաղաք քահանային ու ժողովրդեան մէջ խովութիւն ծագելով, դպրոցին յառաջադիմութիւնը կը նոր կարդանի լինի:

Ե. Եթէ Քիշնեկի մէջ չնորհիւ նորընտիր Առաջնորդին Թէնմական դպրոց մի բացուի, այն դպրոցին տեսուչը պարտաւորուի տարին մի անգամ աչքէ անցընել արձակուրդի ժամանակ վիճակին դպրոցները, հասու լինել տարեկան հաշուց, դասագրոց կարեւորութեանը, գասատուութեան եղանակին և այլ ուսումնական պարագայից:

Ը. Ա. Իմակիս բոլոր Ծխական դպրոցաց զրամագլուխներն ու տարեկան հաստատուն արդիւնքները տպագրութեամբ հրատարակուին.

Ֆ. Որ ամենէն հարկաւոր բանն է, թող Ա. Էջմիածնայ Ուսումնական Յանձնաժողովը և կամ նորա Կախաղահը ըջարերականով խստիւ պատուիրէ այս կանոնները հաստատուն պահէլ և ի դէպս զանցաւութեան, կամ դպրոցի դրամագլուց ու դրամոց շոպութեան՝ բանալ անաշառ ու անկողմանու քննութիւնը ընդ ձեռն քաղաքական իշխանութեան. որով միայն կարելի է դպրոցաց չափաւոր ոռօճիկ ընդունելով:

Որութեան դպրոցներուն պէս, միշտ նոյն հաստատուն վիճակ շնորհել ազգային դպրոցաց:

Խ. Եթէ Ուսումնական Յանձնաժողովով հրատարակած կանոնները՝ սոսկ առաջարկութիւն մնան նաև այսուհետեւ, իրրեւ զեղեղիկ յօգուած մի համարուին լրացրի, և ոչ իրրեւ հարկեցուցիչ պարտք զայն ըստ բառական մոտաց կատարելու, յայնժաման յցոյ չկայ որ դպրոցաց վիճակը բարուիրի, նոցա հոգեւոր ու ժողովրդական նշանակութեան կապը ամբանայ, հապա անտարակուսելի բան է որ քան և հնդկ տարիէ յետոյ ինձ նման ուրիշ բանասէր մի սցն առաջարկութիւնները ընկերվ, գուցէ աւելի գժուարակատարները, ցաւօք սրտի պիտի նկարագրէ դպրոցաց սոյնպիսի խղճալի զրութիւնը, զոր ես ինքնին զրդեալ ի ծշմարտասակութենէ ի կարճոյ զիր անցուցի՛ յուսալով որ մասնաւորաց ումանց շահասիրութիւնը դուրս հանելով՝ ազդիս ընդհանրութեանը հոգալու համար, չնչն ծառայութիւն մի մատուցած կհամարուիմ:

Գ. Տ. Ա. Մ. Ա. Ա.

Ի 20 Մայիս 1872 թ:

ՄԱՅԻՍԻ 1, ԵԶԱԿԱՆԻ.

(Նոր. և Ալբ.)

ԺԴ.

Այս տեղ կամնում ենք ասել, որ մեր մէջ ուսումնատուութեան եղանակը դեռ ևս բարորպավին վերացական ու անկենդան է, որովհետև մեզանում հայեցողական ուսումնատուութեան (աղլածու օցուցելու) վերայ ուշք չեն դարձնում, այն ինչ սկզբնական դաստիարակութեան հիմքը նա պիտի լինի, նա միայն կարող է կեանք ներշնչել մեր դպրոցների մէջ և մանուկ սերնդին մէջ զարգացնել առողջ դաստողութիւն և ճիշդ հասկացողութիւն ըրջապատող աշխարհի մասին Քանի՛ քանի՛ տարիներ երեխան կարդում է, շատ բաներ լսում, շատ բաներ անդիր անում և շատ բաների պատասխաններ տալիս հարցմանքի 54